«ՀՀ Արագածոտնի մարզի Հացաշենի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենությունը հայտարարո
է մրցույթ՝ քիմիայի (6 դասաժամ.ֆիզիկա 6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Ուսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

1. Դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3. Անձը հաստատող փաստաթուղթ,

4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

5. Ինքնակենսագրություն (Ձեւ 5),

6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,

10. Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 - ավել տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հունիսի 10-ից մինչեւ հունիսի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հունիսի 27-ին՝ ժամը 15:00-ին, Հացաշենի հիմնական դպրոցում, հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Հացաշեն բնակավայր, 1-ին փողոց, 4-րդ փակուղի, շենք՝ 2:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով՝ 093 86-27-6